

## ԳԼՈՒԽ VI

ԴԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՍ ՍԳՈ ԵՐԳԵՐԻ ԱՂԵՐԱՍԵՐԸ ՉԱՓԱԾՈ  
ՏԱՊԱՍԱԳՐԵՐԻՆ, ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՍ ԱՅԼ ԺԱՆՐԵՐԻՆ,  
ԱԻՋԱՆԱՐՅԱՍ ԳԱՆՁԵՐԻՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՈՂԲԻՆ

«Երբ շատ ուրախանաս, գնա գերեզման-ները, երբ շատ տիսրես, գնա գերեզմանները», - իյորհուրդ է տալիս հայ ժողովողական ասաց-վածքը:

Կենդանի մազդու գոյությանը փոխարինում են լուր ու անդեմ շիրմաքառերը կամ դամբարանները, որին մերձավորը փորձում է դեմք ու տրոփ տալ ոչ միայն դիմապատկերով և հանգուցյալի եռթյան ու զբաղմունքին համահունչ քանդակներով, այլև իյորհոդանշական տասպանագրերով։ Ինչպես հնադարյան դամբարանները իրենց հարուստ պարունակություններով, այնպես էլ մերօրյա գերեզմանոցները՝ հետաքրքիր մահարձաններով ու գերեզմանագրերով, դառնում են ոչ միայն մարդկային կյանքի սթափեցնող և հուզական երանգներ հաղորդող մաս, այլև՝ մշակույթի բնագավառ։ «Եվ որովհետեւ գեղարուեստը դարձած էր այեւս ծառայել է աստուածներու պաշտամունքին, ամբողջովին նուիրուեցաւ գերեզմաններու, որոնք գեղարուեստական յիշառակարաններու հաւաքավայուեց դարձան»<sup>1</sup>:

Գերեզմանաքարերի վուա կատարված չափածո արձանագրություններ պահպանվել են հիմնականում 18-րդ դարի սկզբներից։ Դավանաբանական ոճով, գրաբար լեզվով գրված տապանագրերի հետ հանդիպում են նաև ժողովողական լեզվով ու ոճով հոգինվածները, որոնք առավել գրավիչ և եռոգիչ են։

Տապանագրերի հավաքնամբ և ուսումնասիրությամբ գրավվել են հայագետներ Դ. Ալիշա-

նը, Յ. Աճեմյանը, Գ. Շովսեփյանը, Յ. Թոսյանը, Մ. Աղավնունին, Ե. Քյոմուըճյանը, Ե. Լալայանը, Ե. Շահագիզը, Ա. Եղարյանը, Ա. Այուրմեյանը, Գ. Գասպարյանը, Դ. Խոտշյանը, Մ. Բարխուդարյանցը և ուրիշներ։ Ս. Գևորգյանի «Դայ վիճագիր բանաստեղծությունը» ուսումնասիրությունը նվիրված է չափածո տասպանագրերի գաղափարական և լեզվա-արտահայտչական առանձնահատկությունների բացահայտմանը։

Արդ. չափածո տասպանագրերը ո՞ր կողմերով են աղերսվում սգո երգերին և հանդիսանում բանահյուսական ստեղծագործություններ։

ա) Նախ՝ դրանք ունենալով հեղինակ (ինչպես յուրաքանչյուր բանահյուսական ստեղծագործություն), այն հայտնի չեն դարձնում սեռունդներին։ (Բացառություն են կազմում ակրոստիքոսի ձևով գրվածները, որոնք պարունակում են հորինողի անունը):

բ) Այս ստեղծագործությունների անհատական շեշտերը հաճախ խամրում, տեղի են տալիս ժողովորի կողմից ընդունված, հավանության արժանացած, պատշաճ մտքերի և արտահայտչածների դոգմատիկ կառուցվածքների առջև։

Գերեզմանագրերի մեծ մասը ունի իր բանաձևային սկիզբն ու վերջաբանը, արտահայտվող մտքերի կայուն հաջորդականությունը, որոնք դրանց հատուկ ժանրային առանձնահատկություններ եադրողելուց գատ, միաժամանակ հեռացնում են բանաստեղծական անհատական ստեղծագործություն լինելուց։

Մահվան այցելությունը բնութագրող այնպիսի արտահայտություններ, ինչպահիք են. «Եացած Շշլիկ, Կ. Պոլիս, 1922, էջ 5»

<sup>1</sup> Գասպարեան Գ., Խոտշեան Դ., Ազգային գերեզմանատուն հայոց Շշլիկ, Կ. Պոլիս, 1922, էջ 5:

հար խորշակն, թառամեցաւ ծաղիկն»<sup>2</sup>, «Փչեց յանկարծ աշնան խորշակ»<sup>3</sup>, «Ինչպես փչեց այն մահաբեր խորշակը»<sup>4</sup>, «Ի սայր անգութ գերանդույ ի ճարակ գոլով մահուամ»<sup>5</sup>, կամ «Սուսեր հատու տիյուր մահուան Կտրէ գկեանս ազգի մարդկան»<sup>6</sup>, սփոված են տապանագրերի մեծ մասի մեջ: Բոլորի համար ընդիհանուր է նաև հանգուցյալի կենդանի հոգու համար աղոթելու, ողորմի տալու հրավեր-խնդրանքը, որը ծևավրովում է հետևյալ կերպերով. «Ես կարօտ եմ մեկ Շայր մերի»<sup>7</sup>, «Միարերան տուք գողորմի»<sup>8</sup>, «Որք հանդիպիք սոյն այս շիրմիս, Խրոխտ սրտի տուք գողորմի»<sup>9</sup>, «Աստուած ողորմի՝ ըստ, ովք անցորդ...»<sup>10</sup>, «Շոգիիս համար Աղօթքի մեծ բառ ալ կուգեմ միայն»<sup>11</sup> և այլն:

Չափած տապանագրերը ունեն ասելիքի և մեկ ընդիհանրական կողմ. կյանքի ունայնությամբ չտարվելու, անմեղունակ հոգու հավերժությունը ապահովելու խորհուրդը. «Շոգի մեղաց մաքուր պահե»<sup>12</sup>, «Թուավ հոգիս անդին, մարմինս ի իյոպան»<sup>13</sup> և այլն:

Ընդ այս տապանաւ յուսով նորոգչին  
Յաւերժ պարծանօք ի խաղաղ հանգչին  
Ուկերք իշխանին Բարսի Արժումաւոյ  
Որ տամս հայկազամց էր ճրագ յուսոյ»<sup>14</sup>:

Սա տապանագրի ամփոփ դասական ձև կարելի է համարել, որովենետև և տապանի ներքո ոսկորմերի խալադ հանգչելու, և նորոգվելու, վերածնվելու հույսը, և հանգուցյալի ճրագ.

<sup>2</sup> Քուեամ Վ, Բարձր Շայր, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 304:

<sup>3</sup> Գասպարեամ Վ, Խուշեամ Դ., Աշվ., էջ 248:

<sup>4</sup> Դնասէր, Շայր գրականությանը տապանաքարերու վրայ, Բազմավայ, Վենետիկ, 1929, էջ 19:

<sup>5</sup> Գասպարեամ Գ, Խուշեամ Դ., Աշվ. աշխ., էջ 146:

<sup>6</sup> Աղավնունի Մ, Միարանք եւ այցելուք եայ Երուսաղեմի, Երուսաղեմ, էջ 106:

<sup>7</sup> Դնասէր, Աշվ. աշխ., էջ 21:

<sup>8</sup> Դնասէր, Աշվ. աշխ., Բագմավէպ, 1928, էջ 340:

<sup>9</sup> Լալայամ Վ, Կասպուրական, Ազգագրական հանդես, գ. 21, էջ 95:

<sup>10</sup> Քուեամ Վ, Գերեզմանատուն Կաթողիկէ Շայր Վ. Պուսոյ, Կ. Պոլիս, 1931, էջ 125:

<sup>11</sup> Գասպարեամ Վ, Խուշեամ Վ., Աշվ. աշխ., էջ 146:

<sup>12</sup> Ջնասէր, Աշվ. աշխ., Բազմավայ, 1929, էջ 21:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>14</sup> Լալայամ Ե, Անեան, Ազգագրական հանդես, գիրք 17, էջ 83:

յուս լինելու մտքերը հատկանշական են տապանագրերի մեծամասնությանը:

գ) Ինչպես ժողովրդական երգն է անցնում րերնից բերան, հղվելով տարածվում և ընդհանրանում, այնպես էլ շատ տապանագրեր անցնում են քարից քար, հարմարեցվում կոնկրետ դեպքին ու անձնավորությանը:

Այս են ապացուցում տարբեր գերեզմանաքարերի վրա, անգամ տարբեր գերեզմանոցներում հայտնարերված նույն տապանագրերը: Օրինակ, Ե. Շահագիզը Նոր Նախիջևանի Ս. Նիկողայոսի գերեզմանատնից գրի է առել հետևյալ տապանագրիրը.

Երբեմն մարդ էի ես ծեզի պես,

Այժմըս եղա ես հողի պես

Ես չի այսի ըլլամ ծեզի պես,

Դուք սիսի ըլլաք ինձի պես,

ոքը Շիշլիի հայոց գերեզմանատանը ուներ այս տեսքը.

Մարդ մըն էի ծեզի պես

Դիմայ եղայ հողի պես

Դուք ալ այսի ըլլաք ինձի պես<sup>15</sup>:

Արցահի Աշան գյուղի իին գերեզմանոցում մեզ վիճակվել է նույն տապանագրիրը կարղալ եղկու տարբեր՝ Աշոտի և Ավագի գերեզմանաքարերի վրա.

Գնացի անդարձ, շատ հեռու աշխարհ

Էլ հետ դառնալու չկա ճանապարհ:

Իգուր է սգալ, անել լաց, կական,

Այսպես է կյանքը բոլոր մարդկության,

Այս է մեր տունը, մեր վերջին տեղը,

Այստեղ այսի գամ խեղճն ու ուժեղը:

ի) Տապանագրերը մի շարք մոտիվային ու կառուցվածքային ընդիհանրություններ ունեն ժողովրդական սգո երգերի հետ:

«Կան գերեզմանաքարեր, որոնց վրա քանդակված են շատ նուրու հայկական իսաչեր և գեղեցիկ նախշեր, սուագ անոդ կանանց արտասանած իսուքերը, շնորհակալական արտահայտություններ՝ արժանի մարդկանց, հասարա-

<sup>15</sup> Նման տապանագրերը կան նաև Ջնասէրի (Բագմավէս, 1928, էջ 339), Ե. Քյոմուրճյանի (Ատամավոլոյ պատմութիւն, հ. Բ, Վիեննա, 1932, էջ 656), Գ. Գասպարյանի և Շ. Խուշյանի (Աշվ. աշխ., էջ 204, 224) գրառումներում:

կական առաջավոր գործիչների, բարեգործների հասցեին», - գրում է Գ. Գևորգյանը<sup>16</sup>:

Սգո երգերի և տապանագրերի հիմնական տարրերությունը նրանց արտահայտության գրավոր և բանավոր ձևերի մեջ է: Ինչպես նույն առիթով ասված իսոսքը կամ ելույթը նույն մարդու բերանով և գրչի տակ՝ անկասկած տարբերվում են իրարից, այնպես էլ սրանք՝ որպես նույն ժողովողի, նույն թեմայով մտածողության արդյունք, զանազանվում են գուտ ձևավորման հանգամանքներով, Սգո երգը, որպես բանավոր ստեղծագործություն, ավելի ագատ է, մանրամասներով հարուստ, առատ՝ ծայնարկություններով, եղանակներով և ինտոնացիաներով, ավելի հուգիչ ու կոլորիտային: Տապանագիրը, ի սկզբանե էլ հորինվելով որպես գրավոր հուշարձան, մանավանդ այնպիսին, որ քարի վուա փոքրագրվելով կարող է պահպանվել դարեր, ձեռք է բերում սեղմություն, ասելիքի հստակություն, կարևոր մտքերի շեշտման ու մանրամասնություններից ծերբագատպելու կարողություն: Այն ավելի դատողական է, ունի համոիսավոր ոճ և ընդհանուր բնույթ:

Սգո երգերը և տապանագրերը ունեն հետևյալ ընդհանրությունները: Երկուսն էլ հորինվում են երկու ընդհանուր ձևով, 1. հանգույցալի անունից, 2. նրան սգացողի անունից: Սգացողը դիմում է կամ հանգույցալին, կամ անցորդներին (սգո երգը՝ սգվորներին):

Առաջին ձևով հորինված տապանագրերը արտահայտում են կարճատև կյանքի հուգիչ պատմություն, կյանքից հեռանալու ցավ, մահվան բերած դժբախտության խորություն:

Ծոայլ էր գարունը, որ իմն էր,  
Ծոինդ էր ու խինդ էր ու սեր,  
Ծոայլ էր և մահը, որ իմն էր,  
Թող ծերը չլինի, ընկերներ:  
Ի նշ եմ անում մահվան հովտում.  
Այսքան ժաղիկ, այսքան ջահել,  
Ի մծ հիշեցեք միշտ ծեր սրտում.  
Ու պահեք թարմ, պահեք ջահել<sup>17</sup>:

<sup>16</sup> Գևորգյան Գ., նշվ. աշխա., էջ 57:

<sup>17</sup> Անձնական գրառումներ, Արցախ, գ. Աշան, նոր գերեգմանոց:

Սգացողը՝ դիմելով հանգույցալին, նշում է նրա բարեմասնությունները, տալիս ապրած կյանքի ու մահվան գնահատականները, նրա հիշատակի հավերժության հույսը.

Կեանքիդ օրերը չ'խնայելով,

Ինչքո, ստացուածքդ ազգին գոհելով,

Դու աղրիւ եղար ժարաւիններուն

Ու պատսպարան կարօտեալներում...<sup>18</sup>

Երկրորդ կարգի տապանագրերում փորձ է արվում այցելուին հասկանալի դարձնել տվյալ հանգույցալի կյանքի ու մահվան խորհուրդը. նրա հիշատակի արժեքը, հարգանքի արժանավորության կովանները.

Դոր մօր սիրական կանանչ ուռեմին

Մահուան խորշակով գլխիկը ծոեց,

Վախ խորշակահար ուսմամ ժաղիկին

Կեանքի հովտին մէջ օճախ մը մարէր,

Պատուիան մըն է գոցուէր դրան հետ

Իր յիշատակէն թող գանլոկ այցեր<sup>19</sup>:

Ինչպես սգո երգերի, այնպես էլ տապանագրերի ամենաշեշտված մոտիվը հանգույցալի արտաքին և ներքին արժանիքների գովերգումն է: Այս մոտիվով հյուսված որոշ գերեզմանագրեր թե՛ իրենց ձևով և թե՛ բովանդակությամբ չեն տարբերվում սգո երգերից: Բնորոշ են նոր Զուղայում թաղված խոջաների տապանագրերը<sup>20</sup>, որոնք, ըստ երևույթին, պատկանում են նույն մարդու գրչին: Սրանք ոճավորված են միջնադարյան դասական ողբերի հանգույն:

Ա՞յս աննման խոջայ որ էիր Յայոց թագաւոր

Անումտ Սարֆրազ կոչի սրընթաց գօրև դատաւոր<sup>21</sup>:

<sup>18</sup> Ծախազիգ Ե., Նոր Նախիջևանը և նոր նախիջեւանցիք. ԱՐ, գիր 7-8, էջ 60:

<sup>19</sup> Գասպարեան Գ., Խոշխան 7. նշվ. աշխա., էջ 142:

<sup>20</sup> Տիր-Դովիհաննեան Յ., Պատմութիւն Նոր Զուղայի, Սպահան, 1890, էջ 103 և Աս. Անցականյան, Հայոքեններ, Երևան, 1995, էջ 541, 542:

<sup>21</sup> Նույն խոջա Նազարի մասին տե՛ս Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Ա պրակ, Թիֆլիս, 1892, էջ 28, «Տաղ վասն քաջ Նազարեթին» սգերգը:

Սգո Երգերում Երիտասարդների մահվան առթիվ օգտագործվող շատ տարածված մոտիվը. ըստ որի հարսանիքի, ծաղկեասակի փոխարեն մահն է այցելել, իր արտահայտությունն է գտել նաև տապանագրերում.

*Փոխան հարսանեաց զգեստոյ բեհեզաց*

*Կուաւ պատանայ զքեզ հողոյ եղո...<sup>22</sup>*

կամ՝

*Պսակաւոր դժբաղդ որդեակ*

*Քեզ կը վայլէր ժաղկէ պսակ<sup>23</sup>.*

Նույն գաղափարը գրեթե նույն ձևավորումն ունի նաև սգո Երգում.

*Այիմ պատվելի որդի,*

*Փեսութեան էիր արժանի*

*Այսօր հարսանեացդ փոխան*

*Կըտաւոք լզքեզ պատեցիս<sup>24</sup>.*

Գովքը տապանագրերում համդես է գալիս ավելի հակիրճ՝ քչով շատ րան ասելու և համոզիչ արտահայտվելու ծգութմով։ Արտահին գեղեցկությունը Երբեմն ներկայացվում է գեղանկարչական կտավին հատուկ գույներով ու տեսանելիությամբ։

*Ծոդ կարմիր կաթկըթեր յայտից գնահմա...<sup>25</sup>*

Գովքը ծավալվում է, ընդգրկում հանգուցյալի արհեստն ու գրադմունքը (որին այստեղ ավելի շատ է ուշադրություն դարձվում, քան սգո Երգերում), Երբեմն տապանագրերին հաղորդում ժողովողական վիպական ու հերոսական ասքերին հատուկ պաթետիկ շունչ։

*Ազնիւ տոհմակամ՝ իշխան փառաւոր,*

*Ինքնավար է ծարտար՝ ի գիւտ նորանոր,*

*Սա եղեւ նախկին՝ ի յազգէս հանուր,*

*Սեծ վարօդապետ՝ արքայից հըզօր,*

*Եւրոպեան ազանց՝ ծարտարք մտաւոր,*

*Ապրին ընդ սորացս՝ վերնածիր շընորի...<sup>26</sup>*

<sup>22</sup> Ղնասէր, նշվ. աշխա, Բագմավէպ, 1928, էջ 339:

<sup>23</sup> Թօսեամ Դ., Բարձր Հայք, Ե.Ա. Վիեննա, 1925, էջ 304:

<sup>24</sup> Մնացականյան Աս., Դայ ժողովողական միջնադարյան Երգեր, Երևան, 1956, էջ 360:

<sup>25</sup> Գասպարեամ Գ., Խոշշեան Դ., նշվ. աշխա., էջ 254 (այսուհետ՝ ԱԳՀԸ):

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 294, 164, 212, Թյոմուրծյան Ե., նշվ. աշխա., էջ 679. Լալայան Ե., Գանձակի գավառ, էջ 233, Թույան Դ., Բարձր Հայք, հ. Բ, էջ 109 և այլն, նաև սգո Երգեր ճանիկեան Յ., նշվ. աշխա., Երգեր 39, 85, 27, 62, 94 և այլն:

Հանգուցյալի կերպարը հյուսվում է պատկերավորման գրեթե նույն միջոցներով. ինչ որ ժողովողական սգո Երգերում և, առհասարակ, որ հատուկ է ժողովողական բանահյուսությանը ընդհանրապես։ Ժողովողի մտածողության մեջ արմատավորված այնպիսի խորհրդանշներ, ինչպիսիք են ծին՝ քաջության, վարու՝ սիրո, ծաղիկը՝ ջահելության, աղավնին՝ անմեղ մանուկի, Երևան են գալիս ինչպես շիրմաքարերի վոա քանդակած, այնպես էլ տապանագրերի մեջ ակնարկված։

*Սեռան սիրած վարդերը մեր*

*Էլ չեն առնի հարություն<sup>27</sup>:*

*Ի փրթելն թառամեցաւ իրեն ժադիկ...*

*Ե՞ր այսպես շուտ խուսաբեցար, սիրուն բոշնիկ<sup>28</sup>:*

Այսպես էլ արևը, լուսը, գարունը, արշալուսը խորհրդանշում են կյանք, ապրելու Երջանկություն, իսկ մութը, վերջալուսը, ձմեռը՝ մահ։

*Տեսի զարկ, այլ մուր պատեաց զմիջօրեայն*

*Տեսի զարուն, ծմեռն եհաս ինձ ասացին։<sup>29</sup>*

Մակդիրներն ու համեմատությունները, որոնց համար սնուցիչ հոդ է հանդիսանում բնությունը՝ իր անսպաս թույզանքներով, ավանդական են, ինչպես և սգո Երգերում, Երբեմն ընտրված ավելի ճաշակով ու գգուշությամբ. ծաղիկ նոնենի, կանանց վարդենի, քաղցրիկ աղավնի, դեռափեթ, ո՞վ քաղցրարույր, կուսածաղիկ սըրրասուն, անմեղ հրեշտակ, պայծառ արև, սիրուն թռչնիկ, գանձ մեր փոքրիկ, խորշակահարշուշան և այլն, և այլն։

Պատկերավորման միջոցները գերազանցապես հարաբերվում են հանգուցյալի տաթիքի, անձնավորության հատկանշների հետ. գործվագութ մայր, բագմաչազար հայր, ուարեգութ գործավոր, հեգ պանդուխտ, թերաբաց ծաղիկ և այլն։

Տապանագրերը ևս մեծամասամբ կառուցված են հակադրության մեթոդով՝ կյանքի ու

<sup>27</sup> Անձնական գրառումներ, Ասեփանակերտ, Եղբայրական գերեզմանոց։

<sup>28</sup> ԱԳՀԸ, էջ 154։

<sup>29</sup> Թօսեամ Դ., Բարձր Հայք, Ե.Ա. Վիեննա, 1925, էջ 293։

մահվան հակադիր պատկերների գուգահեռականությամբ:

Քո՛ւ էր համակ, աստ՝ սառեցաւ  
Հարժում եւ կեանք, աստ՝ դադրեցաւ <sup>30</sup>:  
Կամ՝

Լինել ունեիր պսակ պարժանաց  
արդ եղեր այժմում՝ թախիծ թախժանաց <sup>31</sup>:

Պատկեր-նկարագիր-հակադրության հետ հանդիպում են նաև բառ-հակադրություններ՝ «հագիկ փթթած թոռմեցար», «կեանքիս գարնան արշալոյս էր շուտ գտաւ իր վերջալոյս»<sup>32</sup>:

Դագաղը շրջապատած սգվորների նման տապանագրի հեղինակն էլ պատասխան չունեցող ճարտասանական հարցերով դիմում է հանգուցյալին, դրանք իստացնում են վիշտն ու թախիծը, շեշտում հանելուկային ամորոշության տագնապը: «Զիա՞՞ղ թառամեալ ի ժամ իսորշակայ», «Ո՞ւր թողուցիր մայր, քոյր, եղբայր յուսահատ, էր կըթեցար խոնարի շուշան անարատ»:

Չափածո տապանագրերի տաղաչափության նկատելի առանձնահատկությունը՝ նույնահանգությունը, աղերսվում է ոչ միայն սգո երգին, այլև հայկական ժողովրդական ավանդական րանաստեղծությանն ընդհանրապես<sup>33</sup>:

Մի՛ զիս լացցէ, երգիչ գողթան,  
Մի՛ սոխակին աչք ժրաջան,  
Այլ ծնողացս իմ յարաժամ,  
Եւ ագգակցացս ամենայն:  
Մի՛ եւ Կարապն ողբածայն,  
Մի՛ եւ Տատրակն քաղցրածայն,  
Այլ սիրողին իմ սիրական... <sup>34</sup>:

Այս տապանագրում կան և լացող գողթան երգիչների հիշողություն, և ժողովրդի սիրած թոշուններ սոխակն ու տատրակը, և «սուրն մահուան»՝ ըստ ժողովրդական հիմ հավա-

<sup>30</sup> Քյոմուրյան Ե., Ստամպույ պատմութիւն, Ե.Բ, Վիեննա, 1932, էջ 645:

<sup>31</sup> Դնակեր, նշվ. աշխ., Բազմավեպ, 1928, էջ 310:

<sup>32</sup> Քունան Դ., Բարձր Դայր, հ.Ա. Վիեննա, 1925, էջ 311:

<sup>33</sup> Նույնահանգության օրինակներ տես Քունան Դ. Բարձր Դայր, հ.Ա. Վիեննա, 1925, էջ 91-95, 97-98, 108, 114-115, 125, հ.Ա, էջ 191, Լալայան Ե., Կասպուրական, ԱՐ, գ.21, էջ 94 եւ այլն:

<sup>34</sup> Լալայան Ե., Զավակը, Երկեր, հ.1, Երևան, 1980, էջ 206:

տալիքի և տիրական ոսկորների մինչև համայն հարությունը հանգչելու ընդունված գաղափարը: Սա թերևս մի շատ հիմ ողբերգ է, որ արձանագրվու է գերեգմանաքարին:

Սգո երգերի և տապանագրերի մեկ այլ ընդհանրությունը հանգուցյալի կյանքի մասին տեղեկությունների հաղորդումն է:

Առաջինները դա անում են շատ հարևանցի, երևակայության թիվը ներով համեմված, ավալի շատ վեր հանելով կյանքի զգայական ու գաղափարական կողմերը:

Տապանագրերը ավելի կոնկրետանալով երբեմն տալիս են կենսագրական փաստացի տեղեկություններ<sup>35</sup>:

Տապանագրերը շոշափում են պատմության եզերը, մեր առջև բացում հետաքրքիր դրվագներ, բազմապիսի ճակատագրեր: Ինչպես հայրենանվար հերոսի մասին իյուսված ողբերը, այնպես էլ քննարկվող ստեղծագործությունները տարբերվում են սովորական մահկանացուների մասին հորինվածներից, դրանք ներշնչում են իյոնարհում և ակնածանք.

Անցորդ, խոնարիկիր  
Ծիրիմին քաջի,  
Կյանքը նա գոհեց  
Դանուն Արցախի <sup>36</sup>:

Ի տարբերություն սգերգերի, տապանագրային ժամրում մահկան կերպարը և մահացողի պատկերը դրսնորվում են ավելի որոշակի: Մահը նման է գիշերվա մեջ մարող ասուափի, կերուխումին խառնվող թույնի, արմատից պոկված ծաղկի, խամրող փառքի: Նա հատու սուսեր ունի կամ սուրսայր գերանդի, որով հարվածում է անվոեա: Երբեմն հակիրծ ակնարկվում է մահկան պատճառը.

Մինչ արեգի նշոյլեր փայլուն  
Երկրիս ետեւ խոնարիած,  
Մինչ գեղգեղեր փոքրիկ թոշուն

<sup>35</sup> Քունան Դ., Գերեզմանատուն Կաթողիկե հայոց Կ.Պոլսոյ, էջ 169, նույնի՝ Բարձր Դայր, հ.Բ, էջ 100, Լալայան Ե., Երկեր, հ. 2, էջ 253, ԱՐ, գիրք 17, էջ 83, ԱԳՀ, էջ 213 և այլն:

<sup>36</sup> Անձնական գրառումներ, Ատելիանակերտ, Եղրայրական գերեզմանոց:

**Կամաւոր վերջ դոիր կենացդ՝<sup>37</sup>:**

Պանդիստության երևույթը մի այնպիսի ողբերգություն է եղել հայ ժողովողի կյանքում, որ այդ թեման թափանցելով սգերգության ոյորտ, կազմելով բանահյուսական առանձին ժանր, մեծ տեղ է գրավում նաև գեղեզմանագրության մեջ: Պանդուխտի մահը տարրերակվում է հայրենիքում տևի ունեցած մահից: «Ուհ պանդիստության դառն ճակատագիր»<sup>38</sup>, «Կարօտ հայունիքի 17 տարի»<sup>39</sup>, «Ասա-ղ կենացս պանդուխտ աւարտեցի...»<sup>40</sup> և այլ արտահայտություններ ներկայացնում են ցավի մեջ ցավ, կառուտախտի անսփոփ վեշտ: Երբեմն հորինողը վերանում է անհատական դեպքից և երևույթը քննում որպես համընդիհանուր չարիք, հային բաժին ընկած կենսավեր արհավորք, խորհուրդ է տալիս օտարության մեջ դեգերող ագգակիցներին՝ ամեն գնով հայրենիք վերադառնալ:

Տապանագրերում առանձնակի հնչեղություն ունեն բարոյա-խրատական որոշ գաղափարներ: Ինչպես վշտոտ սգվորն է գգում պատմելու, դատարկվելու պահանջ, այնպես էլ տապանագրողը իմաստնանալով մահվան մոտիկությունից, կարիք ունի իսրուրդ տալու: Յուրաքանչյուր մահարձան իր պատվիրաններն է տալիս, որոնք սակայն խաչաձևվում են նույն հանգուցակետի շուրջ. կյանքը անցողիկ է, մահը՝ ամենազոր, լավագույնը այս պարտադիր պարտության պարագայում բարի հիշատակներ թողնելու:

*Որչափ աշխարհի խարուսիկ փառաց  
Սնուտի յոյսեր պաշարեն քո սիրո,  
Գիտցիր, որ ասեն՝ այդ վայելք կենաց  
Ունայմ եմ, ով մարդ, աստ է քո հանգիստ<sup>41</sup>.*

Բոլորը հող են դառնալու, գերեզմանը գերում է ամենքին, ունայմ ու սուտ են փառքն ու հարստությունը, մարդիկ անցնում են ստվերների պես, մահվան առաջ եավասար են մեծերն ու փոքրերը, իմաստուններն ու թագավորները.

<sup>37</sup> ԱԳՀԸ, էջ 233:

<sup>38</sup> ԱԳՀԸ, էջ 233:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 209:

<sup>41</sup> Քուեամ Դ. Բարձր Հայք, հ.Ա, Վիեննա, 1925, էջ 286:

պատրանք են բերկրանքներն ու ցավերը ողջ. հաստատունն ու ծշմարիտը միայն մահն է՝ «Այսօր ինձի, վաղմ՝ ծեզի»<sup>42</sup>: Միակ բանը, որ խնդրում է իսաղաղ հանգչողը, մի բերան «ողորմի» է, մի երկու կաթիլ արցունք, որ կթեւացնի իր բեռը:

Տապանագրի հիմնական նպատակը հարագատների վշտի մեղմացումն է և հանգուցյալի եիշատակի երկարակեցության ապահովումը: Ըստ հայ ժողովողի սովորության, գերեզմանաքարը կանգնեցվում և տապանագիրը գրվում կամ խնրազրվում է մահվան տարելիցին, երբ սուզը մեղմացած է լինում, և զգացմունքները տեղի են տալիս դատողականության առաջ:

Խնդրո առարկա ստեղծագործություններում ևս, ինչպես և սգո երգերում, արտացոլված ենք տեսնում մահվան հետ առնչվող հայ ժողովողական որոշ հավատալիքներ և սովորություններ:

Նախ, հաճախ է հանդիպում մարմնի մահկանացու լինելուն հակառակ՝ հոգու անմահության հավատը. մարմննը հանգչում է քարի տակ, իսկ հոգին սավառնում է երկնքում, այն թռչունի նման ունի թելու կարողություն.

*Սկացար անդարձ յանմահիցն երամ*

*Առնուկ զգասակ բարեացդ անդարամ:*<sup>43</sup>

Բազմաթիվ են Արարչի կամ Յիսուսի վճոի, Գարորիել իրեշտակապետի, իրեշտակների՝ մահվան գործում ունեցած դերի, մահվան և հարության փողերի հնչման, սև և կարմիր դավթարների, Վերջին դատաստանի ակնարկումները: Գրեթե րոլոր տապանագրերը ունեն հանդերձալ հավերժական կյանքի հույս: Կյանք, որ գտնվում է անքերի բարձրերուն.

*Վերէն դիտեմ պիտ անվրդով*

*Կեանք լեցուն սին փառքերով*<sup>44</sup>:

Մահը այցի է գալիս երկնային իրամանով՝ ըստ կանխորոշված ճակատագրի, և անհեթեր

<sup>42</sup> Քնարէ, նշվ. աշխ.ս., Բազմավեա, 1928, էջ 21:

<sup>43</sup> Քուեամ Դ. Գերեզմանատուն Կաթողիկէ Յայոց Կ. Պոլսոյ, էջ 101, տես նաև էջ 107, 125, ինչպես նաև նույն հեղինակի՝ Բարձր Հայք, հ.Ա, էջ 125:

<sup>44</sup> ԱԳՀԸ, էջ 140:

Են նրան դիմագրավելու փորձերը: Նույն անելանելիությունն է հաստատում սգո երգը:

Գիտնամ, ուր մարդու է եկեր,  
Համ, բերիծ ալէնս ի վրայ:  
Ան, ուր Սստուժու եկեր,  
Ինչեխ լանք, ուր շեմք չիմանայ՝<sup>45</sup>:

Այսպես էլ տապանագրերի մեջ մասը փորձում է համոզել, որ անօգուտ և ավելորդ է լալ, արցունք թափել, որանով նաև փաստելով ողբերգություն, լաց ու կոժ անելու պարտադիր սովորության հարակայությունը. «Բարձեք եղերգութ ողբագին կական»:

Այս ստեղծագործություններում տարողունակ արձագանքներ ունի արևապաշտությունը, արևը կյանքի լարիկանիշ համարելու: Ծայտ տապանների ներքո ոսկորների կամ մարմնի փոխարեն այս կամ այն մարդու «արևն» է հանգչում: Երիտասարդը ոչ թե ապրում էր, այլ՝ արևի պես փայլում, մահացողը երագում է հանդերձալ կյանքում նույնպես արև ունենալ՝ չկորսվող արև, նա արևի մոտ է գնում.

Մարգեցի գարեւ կենաց մի օրեայ,  
Ծիչեմ յեթեր վաղամեռիկ հնգամեայ,  
Ի վայելել յակն արեւու մշտակայ...<sup>46</sup>:

ԵՎ տապանագրերուլ, և սգո երգերով համգուցյալի հարագատները փորձում են իրենց վիշտը բաժանել շրջապատողների հետ. իմաստավորել մահացածի ապրած կյանքը. գնահատել նրա կատարած ու կիսաստ թողած գործերը. արտահայտել իրենց երբեմնի հոգսերն ու երազները՝ կապված հեռացողին. նրա մահվան երևույթից քաղած դասը հաղորդել ողջերին: Այս միասնական նպատակները, նույն թեման ու կյանքի նույն բնագավառը շոշավելու հանգամանքը. սգերգությունն ու տապանագրությունը սերտ մերձեցնում են իրար և բովանդակահին ու պատկերավորման, և գաղափարական ու մոսիկային առումներով:

Տապանագրերը հորինվում են կամ համգուցյալի որևէ հարագատի, կամ նրանց պատվերով և ասելիքի թելաղրանքով՝ որևէ կարող

<sup>45</sup> ճամփկեամ Յ., նշվ. աշխ. երգ 23:

<sup>46</sup> ՍԳՀԸ, էջ 103:

մարդու կողմից: Այս հանգամանքը բացառում է դրանց անհատական պոետական ստեղծագործություն լինելը և վերը նշված այլ յուրահատկությունների հետ համարվելով՝ տապանագրությանը հաղորդում բանահյուսական արժեք և դարձնում ժողովրդական ստեղծագործության մի ուրույն բնագավառ:

«Ժողովրդական երգի եական հատկություններից մեկն այն է, որ միևնույն երգը, անփոփոխ կամ փոքր փոփոխությամբ, իր բովանդակության պատճառով երգվում է և իբրև սիրո երգ. և իբրև վիճակի երգ, և իբրև լաց կամ հարսանեկան երգ, պանդխտի կամ օրորոցի երգ, գի այս երգերն ունեն հաճախ մի ընդհանուր գիծ, այն է գովքը», - գրում է Ա. Արեւոյանը<sup>47</sup>:

Սգո երգերը, ինչպես իրենց թեմատիկայով, իմաստային դրսերումներով, այնպես էլ գեղարվեստական ձևով ու պատկերային համակարգով աղերսվիմ են ժողովրդական բնարերգության նյութ ժամբերի հետ:

Եթե մենոնդը քաջ երիտասարդ է, կամ ագատության համար պայքարած հայրենասեր, սգերգը դառնում է կատարյալ դյուցագներգություն: Իշխում են հպարտության, քաջության, անվեհերության դրվատումն ու վեհ, հանդիսավոր տրամադրությունները: Երբեմն եղերերգուն պատմելով հանգուցյալի կյանքն ու գործը և դրանց հարլորդելով ոռմանտիկ շունչ ու երևակայության ճախրանք, չափագանցելով նրա կատարած րարին և արժանավորը, ստեղծում է մի իսկական վիպական հյուսվածք՝ նման ժողովրդական բանահյուսության հայտնի վիպերգերին («Ասլան աղա», «Մոկաց Միրգա»):

Յարթենն օր կար՝ հաքիմներու բարա եր,  
Արժար քեամար, արխալուղջ խարա եր,  
Զեռս տարայ, թառլան սիրտը եարա եր.  
Բարակ մեջքիդ, ջիւան բօյիդ, Յարթեն ցամ՝<sup>48</sup>:

«Ասոնց (ծայնարկուների - Ե.Դ.) երկերուն կամ մրմունջներուն նիւթը՝ վախճանելոյն հա-

<sup>47</sup> Արեւոյան Ա., երկեր, հ.Բ, Երևան, 1967, էջ 231:

<sup>48</sup> Միփրարեան Ալ., Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 111:

սակը, կեանքը, զանազան ընտանեկան յարաբերությունները, մահուան կերպն ու առիթը կուտար, և անանկով գործէ փոքր վիպասանութիւն մը կը շինուէր», - գրում է Յ. Գաբրիջանը<sup>49</sup>:

Եթե սգերգը նվիրված է սիրահար աղջկակամ երիտասարդի, կամ թե ասվում է նրանց անունից, շատ քիչ է տարրերկում սիրո տիրուր երգերից:

Յաժմամ ու ցողիկ մի տամ  
Թու ծերմակ ծոցիտ վրայ:  
Արթնաս ու վեր իյնաս,  
Աս ինչ ցող ուր իս կու ցողայ<sup>50</sup>:

Սիրածը այսպես կարող է արտահայտվութիւն առարկա անձնավորության և մահկան, և հեռու լինելու պարագայում: Նույն ծևով պանդուիստի վախճանվելու առթիվ իյուսված սգերգերը քիչ են տարբերվում պանդիստության թեմայով հորինված անտունիներից: Այս երևույթի պատճառները երկուսն են. նախ, որ ժողովրդական երգերի մեջ մասը ունեն ընդհանուր, արստրահաված բնույթ, չկոնկրետացված բովանդակություն և երկրորդ՝ մարդկային հույգերը հաճախ, եթե ոչ նույնական, ապա նման են տարբեր հանգամանքներում: Մանկան մահը սգացող ողբերգերը շատ քիչ են տարբերվում օրորոցայիններից, երկուսի հիմնական մոտիվը ել մանկան գովքն է, նրա քաղցրության ու անկրկնելիության դրվագանքը:

Ընդհանրապես հայ կնոջ օրորոցայինից անբաժան է եղել սրտակեղեք ողբի մոտիվը: Նա՝ միջավայրին անհաղորդ և ներամփոփված, իր մամկան սնամի մոտ է լացել իր ճակատագրի դառնությունները, վշտերն ու հոգսերը: Մանավանդ որդեկորույս կամ այոի կնոջ՝ օրորոցի մոտ, թե մի այլ առիթով ասված երգը միշտ ողբ է ու լալիք.

Սիրտս թլե՛ կուլամ էրուն,  
Անխե՞ր թալին իմ ծագերուն,  
Անքուն թողին իմ ծագերուն,  
Սիրտս թլե՛ կուլամ էրուն...<sup>51</sup>

<sup>49</sup> Գաբրիջան Յ., Պատմութիւն մատենագիտութեան հայոց, Վիեննա, 1851, էջ 27:

<sup>50</sup> Ճանիկեան Յ., նշվ. աշխ., երգ 106:

<sup>51</sup> Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային երգեր, Երևան, 1970, էջ 336: Վարդ Մ., նշվ. աշխ., էջ 47:

Կամ՝ օրորոցայինի հետևյալ կտորը.

Օր օ՞ր, օր օ՞ր, օր օ՞ր

Արեւը կու ծագի, ալվա կու մարի.

Արտիս կէսն է տարած, կէսը կու ցալի

Օ՞ր, օ՞ր, օ՞ր<sup>52</sup>:

«Անգիր ողբասացությունը հող է նախապատրաստել գրական ողբի առաջացման ու գաղգացման եամար»: - գրում է Պ. Խաչատրյանը<sup>53</sup>: Ողբասացությունը ծնունդ է առել գրավոր խոսքից առաջ և ապոել նրան զուգահեռ: Գրականության պատմության ողջ ընթացքում ողբը եանդես է եկել այլայլ դրսություններով. մեռելաթարդի ողբ-գանձեր, դամբանական ողբեր, պատմական ողբեր, անհատական ողբական ստեղծագործություններ: Գրական ողբի նյութ են դարձել բազմազան ողբերգական իրողություններ. հայրենիքի կորուստ, քաղաքական և բնական աղետներ, պետական, մշակութային և կողնական ականավոր դեմքերի կորուստ, որևէ անհատի անժամանակ, եղերական մահ, ասպատակություն, կոտորած, ֆիգիկական ու հոգեկան տառապանքներ, բանտ, աքսոր, գերություն և այլն:

Դայ գրականության մեջ ողբը նախ հանդես է եկել որպես ազձակ երկի մի մաս, հավանաբար Դին Կտակարանի երեմիայի ողբի նմանողությամբ (Խորենացու, Դավթակ Զերթողի, Արիստակես Լաստիվերտցու և այլոց ողբերը): Ճետագայում այն առանձին ստեղծագործության տեսքով ծավալվել է միջնադարում, առանձնապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունից» հետո:

Ժողովրդական սգո երգերի հետ ավելի շատ ընդհանրություններ ունեն 1. մեռելաթարդի երգերը, 2. դամբանական ողբերը: «Այս աշխարհական ծեսը վերջը դարձել է կրոնական և առաջ բերել գանձերը, որ հոգեկորականները լալագին երգել են և նույնիսկ այժմ էլ երգում են

<sup>52</sup> Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային երգեր, Երևան, 1970, էջ 336: Վարդ Մ., նշվ. աշխ., էջ 47:

<sup>53</sup> Խաչատրյան Ռ., Հայ միջնադարույան պատմական ողբերը, Երևան, 1969, էջ 7:

ննջեցյալերի վրա»<sup>54</sup>, - գրում է Ե. Լալայանը թաղման ծեսի վերաբերյալ:

Գանձերը, ի սկզբանե լինելով քարոզներ և որպես ժանր ծևավորվելով Գ. Նարեկացու գրչի տակ, նվիրված էին եկեղեցական տոններին, ծեսերին և նպատակ ունեին լսողներին հասկանալի դարձնել տոնի եռաթյունն ու խորհուրդը: Դրանք ունեին պատմողական-նկարագրական բնույթ, կառուցվածքային կայուն միավորներ էին ծայրակապը, կրկնակներն ու վերջաբանը, ունեին հատուկ եղանակավորում<sup>55</sup>: Գանձերի մի ստվար խումբ կապված է թաղման ծեսի հետ: Յենց սրանք էլ ավելի խոր թափանցեցին կենցաղ, քանզի ունեին շոշափելի նմանություններ ժողովողական սգո երգերի հետ<sup>56</sup>: Գանձերի այս խումբը կազմելով մի միջանկյալ օյակ գրական և ժողովողական ողբերի միջև, միաժամանակ հանդիսանում է հոգեւոր և աշխարհիկ արվեստների շփման ժայռակետ:

Կյանքի անցողիկության, մահվան անխուսափելիության, հանդերձյալ կյանքի, վերջին դատաստանի մասին խոհերը հզոր խոհական ու գգայական լիցք էին հաղորդում ինչպես սգո երգերին, այնպես էլ թաղման գանձերին, տաղերին և սաղմոսներին: Մեծ տարածում գտած սգո տաղերից են Սկրտիչ Նաղաշի «Արարիչն ապուուոյ մեզ բարկացաւ», Քերորեհին վերագրված «Յերեկ հողվերօք անցայ, հոտ առայ րգքիմս կափուցի», անհայտ հեղինակների «Ես գիտեի, թ'աշխարհս ինձ մոլոք էր տըւած», «Ինձ ումետ կայր եւ գուման», «Ես զիս ողբի հազար տարու», Յ. Թլկուրանցու «Ե՛, մահ, քանի զքեզ յիշեմ» և այլ ստեղծագործություններ, որոնք երգվում էին թաղման ծեսի ժամանակ:

Միջնադարից հայտնի մի խումբ գանձեր նվիրված են Քրիստոսի խաչվելուն, թաղմանը և Աստվածամոր Վշտին: Սրանք նոտիվային, ծևա-

ոճական շատ գուգահեններ ունեն ժողովրդական սգո երգերի հետ: Օրինակ՝ «Գանձ մեծի ուրբաթի» երգը<sup>57</sup> ներկայացնում է Աստվածամոր ողոր և չի տարբերվում որդեկորուս մոր սգո երգերից.

*ՄՇ գեղեցիկ աչեր ծովաւոր.*

*Այսօր շիջար որպէս ծըրագ նոր.*

*ՄՇ գեղեցիկ գըլուխ լուսաւոր,*

*Խոնարհեցար որպէս վիրաւոր<sup>58</sup>:*

Այսպես շարունակվում է գովասանախառն ափսոսանքը՝ բոլոր տողերը վերջացնելով նույն հանգով, ապա փոխվում է հանգավորումը, մի երկարաշունչ հատված էլ շարադրվում «Վայ» ձայնարկությամբ սկսվող և ի ձայնավորով վերջացող տողերով.

*Վայիմ մեղացս, որ քեզ երկնեցի,*

*Վայ արգանջիս, որ զքեզ կրեցի:*

և այլն: Երրեմն գանձերը ևս, սգո երգերի նման, գրված են մոր և որդու երկխոսության տեսքով<sup>59</sup>:

Դամբանական ողրի ամենահին և դասական օրինակը Դավթակ Զերթողի «Ողրք ի մահն Ձեւանշերի մեծի իշխանին» ստեղծագործությունն է (7-րդ դ.): Յեղինակը նախ «Աստուածային բանին արուեստաւոր հոգուն» կոչում է հորինելու տիսուր երգեր՝ մեծ կորստի վերաբերյալ, ապա շրջապատի երևույթների հետ հարակից գուգահեններով նկարագրում է այդ կորստի ողջ ահավորությունը: Մի քանի Ժլատ, րայց գեղեցիկ ու տեղին խոսքերով Զերթողը դնութեագորում է տեղի ունեցած մահվան ոճրային, նանիր ընույթը: Ակսվում է անեծքների շարանը, որն ընդմիջվում է Ձիվանշիրին բնութագորդ գովեստների հերթագայությամբ: Վերջում պատկերվում է նրա վախճանի առաջ բերած ցավը ու արտասութը: Մահվան երևույթի արձարծված րոլոր կողմերը շոշափվում են նաև

<sup>54</sup> Լալայան Ե., Ծիսական կարգերը հայոց մեջ, պ. Ա. Թիֆլս, 1913, էջ 12:

<sup>55</sup> Արևշատյան Ա., Հայկական ծիսարանի հիմնական երաժշտական շարքերի մասին, ՊԲՀ, թիվ 1, Երևան, 1985, էջ 134:

<sup>56</sup> Խաչատրյան Ռ., Գանձերի ժողովողական ակունքները և հորինան արվեստը, գեկուցման թեզիսներ, Երևան, 1995, զԱԱ ՀԱՒ:

<sup>57</sup> Զօսպանեան Ա, Յայ Էջեր, Փարիզ, 1912, էջ 24:

<sup>58</sup> Համեմատության համար տես Գամառ Քարիսա, նշվ. աշխ., էջ 135, Մնացականյան Ալլ, Յայրեմներ, էջ 597, նույնի Յայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 360, 363 և այլ սգո երգեր:

<sup>59</sup> Միշիքարեան Ալլ, նշվ.աշխ., էջ 8, 24, Ղափանցի Պ. «Ողր կտակի աւուր ուրբաթու մեծի», Զնար Եայկական, էջ 106:

ժողովրդական սգո երգերում: Յայ դամբանական ողբը հետագա ոչ սր դարում ոչնչով չի գերազանցել այս մեզ հասած առաջին նմուշին, որ հորինել է հաճախատրաստից երգող բանաստեղծը:

Սահման մշտական երկյուղը հուզել է բոլոր բանաստեղծներին, և նրանք իրենց երկերում քննել են կյանքի և մահվան հարաբերությունն ու վերջինիս առաջացրած վիշտը: Եթե մինչև 16-րդ դարը ողբեր գրվում էին իհննականում կրոնական նշանավոր գործիչների և ազգային հերոսների մահվան առթիվ, ապա դրանից հետո բանաստեղծները սկսում են չափածո ողբալ նաև իրենց մերձավորի, շրջապատի հասարակ մարդկանց կորուստը: Իսկ դրա համար կար ամուր, խորագնա պատվանդան: «X-XVրդ չափաբերական ամեն մի նշանավոր երկում, լինի այն ողբ թե մրմունջ, պատմություն թե վիպասանություն, վլորքագրություն թե ներրող, աղորք թե շարական, հիշատակարան թե թուղթ կամ գիր օրինության՝ տարբեր չափերով և տարբեր արտահայտչական ձևերի մեջ, միակուսպում և համադրվում են լացն ու տրտունջը, հուսաբեկ աղաղակները՝ հայ եկեղեցու և ազգի մաքառողական պայքարի, գոյատևության, վերանորոգության, կենսական ձգտումների ու երազանքների հետ»<sup>60</sup>:

Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմի և ժողովողական սգո երգերի կառուցվածքի ու մոահիվային համակարգի նմանությունը ակնհայտ է<sup>61</sup>: Թաղման արարողությունների ժամանակ երգվում էին նրա գանձերն ու շարականները: Ժողովողական սգո երգերի հետ շվիման եզրեր ունեն նաև նրան հաջորդող և աշակերտ Գրիգոր Տղայի պատմական ողբերը: Միջնադարում ողբեր ու գանձեր են գրել մի շարք հեղինակներ՝ Նաղաշ և Յակոբ Յովանաթաններ, Առաքել և Կարապետ Բաղդիշեցիներ, Մտեփանոս, Մինաս, Ղազար և Յակոբ Թոխաթցիներ, Յովիաննես Մշեցի, Յովիաննես Կաֆացի, Ներ-

սես Մոկացի, Ահմետն Ապարանցի, Ազարիա Սասնեցի, Դավիթ Սալածորցի, Սոաքել Սյունեցի, Գրիգոր Վկայասեր, Վարդան Յայկագն, Ներսես Լամբրոնացի և շատ ուրիշներ<sup>62</sup>:

Հետաքրքիր ստեղծագործություն է Գրիգոր Մարաշեցու «Վայգիրը», ուր արտացոլված են մահամերձի իրական ապրումները և մահվան պատկերավոր նկարագրությունը: Կյանքի ու մահվան եգորագծին դողացող մարդու հույզերը վերածում են փիլիսոփայական խոհերի՝ մահվան առաջնորդած անձանոթ ճանապարհի և նրա բերած փոշիացնող հավասարության մասին: Գրված է ժողովրդական մտածողությամբ հատուկ անմիջական պարզությամբ և «Վայերի» առատությամբ:

Ագո երգերի և վիպական երգերի աղերսների մի վառ օրինակ է միջնադարոյան «Տաղ Ատեփաննոսին»<sup>63</sup> ողբը: Սա եպիկական հյուսվածքով ներկայացնելով դավադրության հանգամանքներն ու նախապատմությունը, մոր ողբը տեսարանում («Արև, մի ծագեր դու այսօր՝ չտեսմում գիմ որդին») չի տարբերվում ժողովրդական սգո երգերից: Առվագ գովքն ու վիեժի կոչը, անեծքն ու երդումը:

Իր կառուցվածքային հենքով ժողովրդական սգո ծեսն ու երգերը հիշեցնող ստեղծագործություն է: «Ողրանք զոր ասացեալ է Ալիմէօն վարդապետի Ապարանցւոյ ի վերայ թախսին Տըրդատայ թագաւորին» երգը<sup>64</sup>: Հեղինակը բոլորին կոչում է սգի ու կոժի, սգո փող հնչեցնելու և լեռան չափ կական րարձրացնելու.

*Գումարեցէք ցրուեալ որդիսն,  
Ժամ դուք լալոյ եւ արտասուաց:*

*Դաւաքեցէք զեղերամայրս,  
Ռըշէլ բամբռամի ի լուր բազմաց:*

Այստեղ պատկերվում է և թաղման հանդեսին որդիների, հարագաւաների հավաքվելու սովորությունը, և վարսերի փետումն ու քրծեր հագնելը, և դամրանական բամբիո ու փող

<sup>60</sup> Նազարյան Ը., Ողբի և սթափման բանաստեղծություն, Երևան, 1992, էջ 268:

<sup>61</sup> Լրաբեր, Ա 5, Երևան, 1974, էջ 32:

<sup>62</sup> Տեղական Դ., Առաջնադարի հայ բանաստեղծություն, հ.1, Երևան, 1986, հ.2, 1987:

<sup>63</sup> Պատմա-բանասիրական հանդես, № 2, Երևան, 1965, էջ 197:

<sup>64</sup> Տեղական Ար., Յայերգ, Թիֆլիս, 1882, էջ 151:

հնչեցնելը, և աղերսական հայացքը արեգակին հառելը, և սգվորի՝ շրջապատի ամեն մի իրից. առարկայից կառչելը, հենարան որոնելը:

Կան այնպիսի ստեղագործություններ, որոնք թեև հեղինակավոր, գերագանցապես ուժեն բանահյուսական նշանակություն, գերծ են անհատական շեշտերից և կրում են ժողովրդական մտածողության և արտահայտչության անքողարկելի որոշմը: Օրինակ, Աստվածատուր Վարդապետի «Ողբ ի վերայ մանկանցը»<sup>65</sup> կամ Մելքոն Կերեցու՝ թոռանը նվիրված ողբերը<sup>66</sup>: Վերջինիս մեջ հեղինակը «հանում է» պատաճու անունը «Կարմիր դավթարից» և «սկի» մեջ գրում, իսկ պատաճին չքնաղ ու աննման եր. լեզուն բլբուկի ձագի պես անուշ, դեմքը վարդի թերթից էլ կարմիր, լանջը՝ շողշողում, աչքերը՝ ծով, քայլքը՝ ննան սիրամարգի, ինքը՝ նոնենու ծաղկի, գարնան գառնուկի և այլն: Ահա նա թառամեց ծաղկի պես, իյորշակահար, տերևաթափ ու իյակամեռ եղավ:

Ուստի՝ ժամանեց քեզ այս կրակ բոցն.  
Մրտիկ խառնած սրով փյեր քո խոցն,  
Մեւ հողով կու ծածկեն քու ծերմակ ծոցն,  
Աւա՞ղ, ափսո՞ն կւսնանչ արեւտ Սամէլ:

Ողբ-զանձի ժամրի հարուստ ժառանգություն է թողել Երեմիա Չելեպի Ջյոմուրճյանը (1637 - 1695)<sup>67</sup>: Նա զրել է Երկու տասնյակի հասնող ողբեր, որոնք համարյա րոլորն էլ ունեն ծայրակապ, կրկնակներ և հետևյալ կառուցվածքային շերտերը. ա) գովք մեռածի, բ) մահվան գույժի թողած տպավորության նկարագրություն, գ) վայսանվածի սուզ, դ) միհիթարություն, ե) քարոզչություն անցավոր կյանքի և երկնային արքայության մասին: Կառուցի բոլոր մասերը, րացառությամբ վերջինի, հատուկ են նաև ժողովրդական սգո Երգերին<sup>68</sup>: Ջյոմուրճյանը հաճախ է սուզի հրավիրում լալկամների: Առանձնապես

<sup>65</sup> Հայացն Ե, Զավակիք, Երկեր, հ.1, էջ 302:

<sup>66</sup> Պայսան Տ, Դայ աշուղներ. Ժողովրդական հայ Երգիչներ եւ տաղասացք, Ե.Ա, Իզմիր, 1911, էջ 254:

<sup>67</sup> Օրագրութիւն Ե. Չելեպի Թէօմիրճեանի, Երուսաղէմ, 1939:

<sup>68</sup> Այլշամ 2, նշվ. աշխ., էջ 31, «Ողբ մօր ի վասդամեռիկ որդին», ինչպես նաև ծան. 55-ից եետո աստղանիշի տակ (էջ 5) նշված ժողովրդական սգերգերը:

հուզիչ, ժողովրդաշումք և անմիջական ողբեր են նորը, դստերը և զարմուհուն նվիրված ստեղծագործությունները: Վերջին ծավալուն ողբի մի հատվածը վերնագրված է «լաց լալականի», ուր «Եղո՞ւկ», «աւա՞ղ» ժողովրդական Երգերին հատուկ Եղանակավորող բառերով, տատրակի բարբառի, պաղպաջուն ակի, քաղցրախոս արտուտի, քաղցրիկ աղավնու. նոնենու ծաղկի հետ արգող համեմատություններով գովում է հանգուցյալ աղջկան. որի համար հարսանիքի փոխարեն թաղում են կազմակերպում: Յարագատ դստերը սգացող ողբը պարզապես ժողովրդական Երգերի ամփրփ, անհատականցված մի օրինակ է. «Ամառն սաստիկ ծիւնաբեր Եղաւ», «արեգակն իմ իյաւարեցաւ» և ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ այլ արտահայտություններով:

Մինչեռ գարնանս նոնենիս ծաղկեալ,

Խորշակ մահուն յանկարծ թօթափեալ.

Մինչ նորատունկ զայգիս իբր յօտեալ,

Զնործ բարունակ յարմատոյ կտրեալ<sup>69</sup>:

Նկատելի է, որ 16-րդ դարի վերջերից սկսած զրական ողբերը հեռանում են ժողովրդական ակունքներից:

Ժողովրդական սգո Երգերը շփման հանգուցակետեր ունեն նաև հայ գրականության մեջ առկա որոշ կաֆաների հետ, որոնցում մայրը սգում է վաղամեռիկ որդուն, կինը՝ ամուսնուն կամ մահացողը՝ ինքն իրեն: Դրա ցայտուն օրինակը Ալեքսանդրի պատմության կաֆաներն են:

Այ իմ միամաւր որդեակ,

Աղեքսանդր իրզաւր մեծ արքայ.

Չերէ արժանի տեսոյդ,

Վայ քո մաւրն Ոլոմպիադայ.<sup>70</sup>

Ողբեր հորինող և ոչ մի հեղինակ գերծ չի մնացել ժողովրդական տարածված Երգերի ծևառական ու բովանդակային ագդեցություններից: Գրական ողբերը, սկիզբ առնելով Դավթակ Քերթողից, կենսունակ են մնացել ողջ միջ-

<sup>69</sup> Օրագրութիւն Ե. Չելեպի Թէօմիրճեանի, էջ 627:

<sup>70</sup> Պատմութիւն Աղեքսանդրի Ալկեղոնացւոյ, Աշխատասիրությամբ Շ. Ախմոնյանի, Երևան, 1989, էջ 356:

նադարի ընթացքում: Դրանք շոշափելով մեռած անձնավորության կենսագրությունը, կյանքը ու մահվան համգամանքները, արտացոլելով նրանց

ապրած ժամանակաշրջանը, սովորությունները, բարքերն ու գրաղմունքները, ծեռք են բերել նաև վավերագրական արժեք: Այդսիսիք գրվում են նաև այժմ: